յԱսպահան, անդ տուեալ կառուցանել զնորն Ջուղա, և աւերեալ զհինն. որոյ կան միայն նշխարք մեծագործ շինուածոց, բերդի և կամրջոյ, և հիացուցիչ հոյակապ գերեզմանաց. 'ի գերբուկս աւերակացն զեռան կարիճք մեծամեծք. բայց յամաց հետէ աճէ բնակութիւն Հայոց առընթեր նմին և են այժմ տունք 55: Ժամու 'ի հարաւոյ նորին կայ այժմ Նաւակետղ անցին Երասխայ, Ճանապարհ վաճառուց ընդ Ատրպատական: Սերունդք Ջուղայեցոց 'ի Պարսս՝ տառապանօք նուաղեցին և սնանկացան. այլ գաղթեալքն 'ի Հնդիկս՝ ոչ սակաւ բարգաւաճեցին և բարգաւաճեն մինչև ցայսօր: — Ցարևմտից հիւսիսոյ Ջուղայ առ խառնրդովք Ալք-չայ գետոյ յԵրասխ յաջմէն՝ կայր ԽՐԱՄ քաղաք յորում զնախարարսն Հայոց այրեցին Հագարացիք որպէս 'ի Նախիջևան յամին 704. առ աւերակօք նորին կայ Ղամֆ կամ Տարալամֆ գիւղ, ուր մասն նշխարաց Ս. Կարապետին պահիւր, և յելս կոյս Ժ դարու փոխադրեցաւ 'ի Ջուղա, և յետ աւերման սորին՝ 'ի Ս. Ստեփաննոս վանս Մաղարթայ, որ կայ ընդ մէջ Խրամայ և Ջուղայ առ ստորոտով լերինն Մաղարթայ. յառաքելոյն Բարթողիմէայ և 'ի Թադէէ ասեն հաստատեալ ըզվանսն, և 'ի մեծէն Ներսիսէ. և 'ի հիման եկեղեցւոյն ասի եդեալ Ս. Բարթողիմէայ երիս հատս մանանայի. յամին 976 Աշոտ Գ և Խաչիկ կաթուղիկոս նորոգեցին զկալուածս վանացն և կոնդակ նոցին ցարդ պահի անդ. իսկ յամին 1643 Յակոբ կաթուղիկոս վերստին նորոգեաց ամուր պարսպօք և բրգամբք. և այլք յետ նորա. և շէն և պայծառ է տեղիս, ուր ցուցանեն յիշատակս զառաքելոյն Բարթողիմէայ, աղբիւր և խաչ երկաթի և գրոշմածս խաչաձևս 'ի վիմի. և պարգևս արքայատուրս 'ի Բագրատունեաց:

155. Ը. ՈՐԴՈՒՊԱՏ գաւառ որ է ՈՐԴՈՒԱՏ ըստ Նախնեաց, և 'ի սպառուած Հայոց Նահանգին կայ, անձուկ սահմանաւ և եռանկիւնաձև, 'ի հարաւոյ զԵրասխ ունելով, 'ի մտից զԵրնջակ, և յելից զԽափան Գարապաղու. և է հինն ԳՈՂԹՆ կամ ԳՈՂԹՆԱՍՏԱՆ գաւառ, մերթ Վասպուրականի և մերթ Սիւնեաց սեփականեալ, և ԿՈՎՍԱԿԱՆՆ Սիւնեաց. զարևելակողմն պարսպեն լերինք Գարապաղու, Խաչանջէւ 'ի հիւսիսոյ և Ալանջէղ 'ի հարաւոյ. յառաջնոյն իջանէ հզօրագոյնն գետոց գաւառիս ջուրն Բասափ: — Անուանի էր գաւառն Գողթան յաւուրց Հայկազանց՝ արգասաբերութեամբ երկրին և հանճարոյ բնակչացն, երգասէր և բանաստեղծ մարդկան, որոց յօրինեալ էր վիպասանութիւնս զնախնեացն քաջաց և անգիր երգովք աւանդեալ յետնոց ցհինգերորդ դար. յորում կրկին մանաւանդ թէ երեքկին՝ յետ Բարթողիմէայ և սրբոյ Լուսաւորչին՝ քարոզեաց նոցա սուրբն Մեսրովպ, ցածուցանելով զառասպելասէր բարս նոցին. մինչև ցայսօր միայն առ նոսա յիշատակք առաքելոյն Բարթողիմէայ աւետարանչի երկրին, իսկ վիպասանութեանցն փոխանակ՝ նորալուր բարբառ նոցա՝ զոր Զոկ կոչեն, որպէս և զինքեանս. և են արդարև բանաստեղծականք թարգմանութիւնք բառից նոցին: 4000իւ չափ ևեթ են Հայ բնակիչք գաւառիս, սուղ ինչ նուաղագոյն և մահմետականքն, բնակեալք 'ի գեօղս 52, որք 'ի հինգ վիճակս տրոհեալ բովանդակին:

156. Առաջին վիճակ է ՈՐԴՈՒԱՏ՝ այժմ ՕՐՏՈՒՊԱՏ կոչեցեալ յարևելակողմն հարաւոյ գաւառին՝ առ Երասխաւ, ինն գիւղովք. Ժամու հեռի կայ 'ի գետոյն մեծէ քաղաքն ՕՐՏՈՒՊԱՏ 'ի բարձու 1850՛ քարափանն՝ խոնարհելոյ 'ի դաշտակողմն. տունք նորա ցրիւ կանգնեալ կան 'ի միջի ծառոց անտառի, յորոց սօսի մի մեծ 32՛ շրջապատաւ բնոյն 'ի 6՛ բարձրութեան յերկրէհ՝ ովանանայ կիսոյ հրապարակի միոյ, և մերձ 'ի կոճղն փապարեալ ժողովարան է սենեկաձև. պատեն և զքաղաքաւն ծառք, ընդ որս և թթենիք շերամաբոյծք: Բնակիչք քաղաքին 4000, յորս 200 միայն Հայք: Ի սահմանաց Օրտուպատայ սկսանին երագասահ հոսանք Երասխայ ընդ քարուտ զառիվայր երկիր, քանզի խոնարհի յատակ երկրին ընդ արևելս իբրև 800՛ ցՄեղրի, որ չորիւք ևեթ փարսախօք հեռի կայ, և անտի և անդր նոյնպէս ցքարավազս իւր, անցանելով ընդ անձուկս վիմաց և ընդ ժայռս: Յելս անդ սահմանաց գաւառիս մերձ 'ի Մեղրի կայ Կարչեւան գեօղ 30 հայ տամբք և հուպ 'ի նա մենաստան յանուն Ս. Կարապետի: Մի 'ի գիւղորայիցն է և Վէնէի 30 տամբք մահմետականաց, 'ի հիւսիսոյ Կարչևանայ, և թուի բնակայր Գողթն գաւառի՝ աղաւաղելով անուամն: Այլ յետին ծանօթ գլխաւոր տեղի գաւառին է ԱԳՈՒԼԻՍ 'ի հիւսիսոյ Օրտուպատայ՝ գլխաւոր աւան փոքու վիճակի, յորում հինգ գեօղք ևեթ են. և կայ առ վտակի փոքու յարևմտից Պէրճէ լերին, և ըստ Նախնեաց՝ Գորռայ լերին, որոյ պար երկայնեալ ընդ հիւսիս խառնի 'ի լերինս Տարալաղզայ: Ս. Բարթուղիմէոս քարոզեալ աստ կացոյց առաջնորդ հաւատացելոցն ըզԿումսի զոր աշակերտեացն 'ի Խորասան աշխարհի, և նմա յաջորդեաց Բաբելաս Խուժիկ, և միայն քրիստոնեայք ցաւուրս Ս. Գրիգորի թաքուցեալք 'ի քարայրս Գարուայ. որ նորոգեաց զեկեղեցին շինեալ 'ի Բարթողիմէայ և հաստատեաց զաթոռն եպիսկոպոսական, վիճակեալ նմա գեօղս՝ յորոց շատք կանգուն կան. եկեղեցին կոչի յանուն Ս. Թովմայի և մենաստան մեծ պարսպէ զնա, ամուր և վայելուչ շինուած նորոգեալ յԺԻ դարու, որ և շէն է և աթոռ եպիսկոպոսի և վարժարան. արտաքոյ պարըսպացն կայ մատուռն շիրմի Ս. Կումեայ և հին գերեզմանք: ՅԱգուլիս՝ որ յերկու թաղս բաժանի 200 տունք են Հայոց և ըստ այլոց 300, և 50 մահմետականաց:

157. Ի մտից Ագուլիսայ կայ վիճակն ՏԱՍԴԻՆ յանուն Դաստակ գեղջ և կամ Դաշտայ՝ որ ընդ մէջ Որդուատայ և Երասխայ, առ որ ստորերկրեայ ուղի գործեալ ասի յոտից բլրոյն՝ ուր կայր Դաշտ: — Մերձ նմին է ընդ մէջ Որդուատայ և Ագուլեաց՝ Վանանդ գեօղ, անուանի 'ի հնումն բնակչացն արութեամբ և ուշմութեամբ, ուր ասեն կատարեալ զսուրբն Լուսիկ աշակերտ Բարթուղիմէայ: Վանանդ և Ալաստ Գիրան սեփական կալուածք էին Ս. Վահանայ Գողթնացւոյ և պայազատաց տոհմին: Ի Վանանդայ անուանի եղեն և յԺԻ դարու Թովմաս եպիսկոպոս և